



Մեդիագրագիտությունը հասարակության խոցելի մեծահասակների համար 2.0

*Թիրախ խմբերի շրջանում
մեդիագրագիտության ուսումնասիրություն*

Օգոստոս, 2022թ.

Բովանդակություն

| | |
|---|----|
| Գործադիր ամփոփում | 3 |
| Համատեքստը | 7 |
| Մեթոդաբանություն | 7 |
| Հիմնական բացահայտումներ..... | 10 |
| Եզրակացություններ փ առաջարկություններ..... | 20 |
| Հավելված 1. Ֆոկուս խմբային քննարկման հարցաշար | 23 |
| Հավելված 2. Վարժություն 1 | 26 |
| Հավելված 3. Վարժություն 2 | 27 |

Գործադիր ամփոփում

Այս հետազոտությունն իրականացվել է «Մեդիագրագիտություն հասարակության խոցելի մեծահասակների համար 2.0» ծրագրի շրջանակներում և նպատակ ունի վալիդացնել 2021թ. իրականացված հետազոտության միջոցով բացահայտված մեդիագրագիտության կարիքները ու վերհանել ավելի խորքային տվյալներ ծրագրի նոր շրջափուլի մեջ ընդգրկված խմբերի շրջանում մեդիագրագիտության կոմպետենտության բացերի մասին, ինչպես նաև մշակել առաջարկություններ, որոնք կօգնեն ծրագրի ավելի նպատակային իրականացմանը:

Հետազոտությունն իրականացվել է ֆոկուս խմբային քննարկումների մեթոդի օգտագործմամբ, որը հնարավորություն է տվել խորքային տեղեկատվություն հավաքել նրանց կարիքների վերաբերյալ: Թիրախային խմբերի մեդիագրագիտության կոմպետենտության աստիճանը հասկանալու և հնարավոր բացերը իդենտիֆիկացնելու համար, բացի ինքնազննատուրը, ֆոկուս խմբային քննարկման ժամանակ մասնակիցներին առաջարկվել են նաև պրակտիկ վարժություններ, որոնք օբյեկտիվորեն նկարագրում են մասնակիցների մեդիագրագիտության աստիճանը:

Հետազոտությունը ներառում է 15-65 տարեկան խոցելի մեծահասակներ հինգ տիպի խմբերից Երևանից, Գեղարքունիքի, Տավուշի և Շիրակի մարզերից, որոնք հանդիսանում են ԴԿԿ Ինթերնեյշնալի գործընկեր կազմակերպությունների շահառուները՝

- Պատերազմի մասնակիցներ
- ՏԻՄ ներկայացուցիչներ
- Ուսուցիչներ
- Ծնողներ
- Խառը խումբ

Այս ուսումնասիրությունը տեղեկատվության հավաքման և վերլուծության համար օգտագործել է տեղեկատվության ստացում – որոնում – ընկալում – գնահատում– պահպանում– փոխանցում – ստեղծում տրամաբանական շրջանականը:

Հիմնական բացահայտումներ

Տեղեկատվության որոնում և ստացում

- Սոցիալական ցանցերը տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրն են հետազոտության մասնակիցների շրջանում:
- Մեծահասակները լրատվության պասիվ, իսկ մասնագիտությանն ու հետաքրքրություններին վերաբերող տեղեկատվության ակտիվ սպառողներ են:
- Մեծահասակների մոտ գրանցվել է վերաբերմունքի և վարքագծի փոփոխություն քաղաքական լրատվության սպառման տեսանկյունից՝ պայմանավորված պատերազմով:

Տեղեկատվության ընկալում և գնահատում

- Մասնակիցներն ունեն անվստահություն մեդիայի նկատմամբ: Ընդ որում՝ թերահավատությունն առաջացել է ոչ թե կոնկրետ աղբյուրների կամ բովանդակության ստուգման արդյունքում, այլ ավելի շուտ կանխակալ վերաբերմունք է:

- Հետազոտությանը մասնակցած մեծահասակների մոտ գերակայում է մեդիայի օգտագործման հուզական մոտեցումը: Մասնակիցներին բնորոշ է զգացմունքային արձագանքը տեղեկատվությանը:
- Մասնակիցների մոտ նկատվել է վերահաստատման կողմնակալություն՝ տեղեկատվությունը ընկալելը և դրան գնահատական տալը արդեն իսկ ունեցած համոզմունքների տեսանկյունից:
- Մասնակիցները հիմնականում ինտուիտիվ են գնահատում տեղեկատվության հավաստիությունը: Նրանց գիտելիքները համակարգված չեն, հատվածային են և մեծամասամբ հիմնվում են մասնակիցների անձնական փորձի կամ ինտուիցիայի վրա:
- Մասնակիցները հիմնականում երեք տիպի արձագանք են տալիս հնարավոր կեղծ տեղեկատվության հանդիպելիս՝ անտեսել/սպասել, ստուգել, արգելափակել, բայց գերակշռում է ոչ նախաձեռնողական վարքագիծը:

Տեղեկատվության պահպանում/փոխանցում/ստեղծում

- Տեղեկատվության պահպանման հնչեցված մոտեցումները հիմնականում նույնն են բոլոր խմբերում, սակայն խմբի մասնակիցներից ոչ բոլորն են տիրապետում մեթոդների բազմազանությանը:
- Մեծահասակները հակված են կիսվել միայն «դրական», «օգտակար», «լավ», «ճիշտ» տեղեկատվությամբ, այնուամենայնիվ, այդ հատկանիշների չափանիշները այդքան էլ հստակ չեն:
- Մասնակիցները ավելի հաճախ սպառում կամ փոխանցում են տեղեկատվություն, քան ստեղծում, իսկ ստեղծելու դեպքում էլ երբեմն չեն գիտակցում:
- Մեծահասակների մի մասը ընդունում է, որ կիսվել է ոչ հավաստի տեղեկատվությամբ, բայց դժվար է գնահատել, թե որքանով են նրանք կարողացել վերացնել դրա հնարավոր հետևանքները:
- Տեղեկատվություն պահելիս կամ շրջանառելիս առաջացող հնարավոր վտանգները մասնակիցները պատկերացնում են հիմնականում երկրի անվտանգության տեսանկյունից և ոչ այնքան ամենօրյա մակարդակում:

Մեդիագրագիտության դիտարկված և ընկալվող կարիքները

- Մասնակիցները հաճախ ծանոթ չեն մեդիագրագիտության կոնցեպտին և նկատելի են մեդիագրագիտության բառապաշարի, տերմինների իմացության թերացումներ:
- Մեծահասակները ոչ միշտ են մոտիվացված մասնակցելու մեդիագրագիտության դասընթացներին:

Եզրակացություններ

Քանի որ մասնակիցների ճնշող մեծամասնությունը չունի ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթություն մեդիագրագիտության ոլորտում, նրանց գիտելիքները տեղեկատվության ստուգման, աղբյուրների հավաստիության գնահատման, հնարավոր ռիսկերի և վտանգների բացահայտման և դրանց նվազեցնելուն ուղղված քայլերի մասին համակարգված չեն, հատվածային են և հաճախ կախված են մասնակիցների ինտուիցիայից:

Եթե գիտելիքների մակարդակում թիրախ խմբի մասնակիցները քիչ թե շատ տեղեկացված են մեդիագրագիտության կանոնների գոնե որոշ մասին, ապա հմտությունների և վարքագծի իրականացման տեսանկյունից այս արդյունքն ավելի մտահոգիչ է:

Մասնակցիներն ունեն անվստահություն մեդիայի նկատմամբ. նրանք կամ խուսափում են դրանից, կամ շատ զգացմունքային են արձագանքում զարմանալի, թվացյալ կեղծ կամ իրենց համար տհաճ տեղեկատվություն հանդիպելիս: Այս ֆենոմենը որոշ չափով կապված է պատերազմի ժամանակ ահռելի մեդիահոսքերի առաջացրած հուզական լարվածության և նաև կոլեկտիվ տրավմայի հետ:

Չնայած շատ դեպքերում խմբերից ստացված տվյալները համաչափ էին, այնուամենայնիվ, որոշ նկատելի ուղղություններով խմբերին հատուկ է միայն իրենց բնորոշ առանձնահատկություններ: Օրինակ՝ պատերազմի մասնակցներին ավելի բնորոշ է էմոցիոնալ արձագանքը, ՏԻՄ ներկայացուցիչներն ավելի ակտիվ են հետևում լրատվությանը, բայց հակված չեն նոր մեթոդներ սովորելուն, իսկ Դիլիջանի խառը խումբը ավելի բաց է նոր դասընթաց անցնելուն: Ուսուցիչները ունեն մեդիագրագիտության ավելի սպեցիֆիկ կարիքներ, քանի որ այդ գիտելիքներն ու հմտությունները օգտագործելու են իրենց աշխատանքի շրջանակում, իսկ ծնողները կարիք ունեն սովորել սոցիալական մեդիայի ավելի հիգիենիկ օգտագործման կանոններ:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ թիրախ խմբերի մեծահասակների մի մասի մոտ նկատվում են նաև թվային գրագիտության բացեր՝ ժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու, անձնական տվյալները պաշտպանելու, կարգավորումները կառավարելու:

Քանի որ մասնակցների մեծ մասը ծանոթ չէ մեդիագրագիտության հայեցակարգին, չի մասնակցել մեդիագրագիտության միջոցառումների, նրանք ոչ միշտ են ընկալում դասընթացի կարևորությունը և նրանց բնորոշ է ցածր մոտիվացիան:

Առաջարկություններ

- Առաջարկվում է իրականացնել համակարգային մոտեցմամբ դասընթաց, որը կանդորառնա տեղեկատվության ստացում – որոնում – ընկալում – գնահատում– պահպանում– փոխանցում – ստեղծում շրջանակն ամբողջությամբ՝ ցույց տալով նաև այս տարբեր բաղադրիչների միջև կապերը:
- Որպեսզի մասնակիցները գիտելիքների ստացումից հետո դրանք կիրառեն հմտությունների մակարդակով և արդյունքում փոխեն վարքագիծ, առաջարկվում է մասնակիցներին բացի տեսական գիտելիքները տրամադրել նաև պրակտիկ գործիքակազմ, որը իրագործելի քայլեր կառաջարկի տեղեկատվության ստեղծման, ստուգման և շրջանառման համար:
- Հաշվի առնելով հուզական և անվստահության մթնոլորտը՝ առաջարկվում է դասընթացի ժամանակ ուշադրություն դարձնել նաև մեդիայի բացասական ազդեցությունների կանխարգելման թեմաներին, ինչպես նաև փորձել զարգացնել մասնակիցների հուզական բանականությունը և նրանց սովորեցնել սթրեսի կառավարման հմտություններ՝ տեղեկատվության հետ աշխատելիս:
- Հաշվի առնելով խմբերի առանձնահատկությունները՝ առաջարկվում է բացի դասընթացի հիմնական ծրագիրը անհատականացված շեշտադրումներ ունենալ յուրաքանչյուր խմբի համար, որպեսզի թիրախավորվեն նրանց առանձնահատուկ կարիքները:

- Առաջարկվում է մեդիագրագիտության ուսուցումը զուգորդել թվային գրագիտության բաղադրիչով՝ զարգացնելով առցանց աշխարհում կողմնորոշվելու և թվային հաղորդակցության գործիքները գրագետ օգտագործելու հմտությունները:
- Առաջակվում է մինչև դասընթացի բուն մոդուլներին անցնելը բարձրացնել գիտակցությունը թեմայի կարևորության վերաբերյալ՝ շեշտադրելով այն օգուտները, որոնք կստանան դասընթացին մասնակցելիս և այն վտանգները, որոնք կշարունակեն առկա լինել, եթե չսովորեն և չկիրառեն մեդիագրագիտության հիմնական սկզբունքները:

Համատեքստը

2021 թվականին ԴԿԿ Ինթերնեյշնլը և Հանրային լրագրության ակումբը համատեղ իրականացրել են «Մեդիագրագիտություն հասարակության խոցելի մեծահասակների համար» ծրագիրը, որի որի նպատակն էր բարելավել թիրախ խմբի՝ 34-65 տարեկան գյուղական բնակչության, գործազուրկների, կանանց, տեղահանվածների մեդիագրագիտության հմտությունները: Ծրագիրը կենտրոնացած էր մեդիագրագիտության կրթության, իրազեկության բարձրացման և կարողությունների զարգացման վրա: Ծրագրի ասպեկտները ներառում էին ռեսուրսների մշակում, մեդիագրագիտության ուսուցում և փաստերի ստուգում, որոնց մշակմանը աջակցել են նաև միջազգային փորձագետներ:

Առաջին ծրագրի ընթացքում իրականացվել է հետազոտություն¹, որն օգտագործելով քանակական հարցման և ֆոկուս խմբերի մեթոդները՝ խոցելի խմբերի շրջանում ուսումնասիրել է մեդիագրագիտության կարիքները, նկարագրել անհրաժեշտ գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումներն ու վարքագծերը, ինչպես նաև առկա հիմնական միտումները և դրանք պայմանավորող գործոնները:

2022 թվականին, հիմնվելով առաջին ծրագրի ձեռքբերումների վրա, մշակվել է «Մեդիագրագիտություն հասարակության խոցելի մեծահասակների համար 2.0» ծրագիրը²: Հայաստանում խոցելի մեծահասակների մեդիա գրագիտության բարելավմանն ուղղված այս նոր ծրագիրը կունենա ընդլայնված տարածաշրջանային ընդգրկում և դիվերսիֆիկացված շահառու խմբեր: Այն կբարելավի մեդիագրագիտության դասընթացի մոդուլը՝ օգտագործելով առաջին ծրագրի միջոցով մշակված ռեսուրսները և կներառի մեդիագրագիտության նոր գործիքներ:

Քանի որ առաջին ծրագրի ընթացքում իրականացված հետազոտությունը վերհանել է խոցելի բնակչության շրջանում մեդիագրագիտության ընդհանրական ագրեգացված նկարագիրը, նոր ծրագիրը իրականացրել է նոր որակյալ հետազոտություն՝ հիմնվելով նախորդ տարվա հետազոտության արդյունքների վրա: Այս նոր հետազոտությունը բացահայտում է սպեցիֆիկ թիրախ խմբերի՝ ՏԻՄ ներկայացուցիչների, ուսուցիչների, ծնողների, պատերազմի մասնակիցների ավելի խորքային և դետալավորված մեդիագրագիտության նկարագիրն ու կարիքները:

Մեթոդաբանություն

Նպատակն ու խնդիրները

Այս հետազոտության նպատակն է վալիդացնել նախորդ հետազոտության միջոցով բացահայտված մեդիագրագիտության կարիքները ու վերհանել ավելի դետալավորված տվյալներ ծրագրի նոր շրջափուլի մեջ ընդգրկված խմբերի շրջանում մեդիագրագիտության կոմպետենտության բացերի մասին, ինչպես նաև մշակել առաջարկություններ, որոնք կօգնեն ծրագրի ավելի նպատակային իրականացմանը:

Հետազոտության մասնավոր **խնդիրներն** են՝


¹ԴԿԿ Ինթերնեյշնլ. (2021). Հայաստանում խոցելի բնակչության շրջանում մեդիագրագիտության կարիքների գնահատում, Երևան

² <https://www.dvv-international.ge/armenia/projects/media-literacy-for-the-disadvantaged-in-society>

- Բացահայտել թիրախային խմբի գիտելիքների և հմտությունների մակարդակը տեղեկատվության ստացման, որոնման, պահպանման, փոխանցման և ստեղծման վերաբերյալ:
- Ուսումնասիրել թիրախային խմբի փաստացի վարքագիծը տեղեկատվության ստացման, որոնման, պահպանման, փոխանցման և ստեղծման փուլերում:
- Ուսումնասիրել մեդիագրագիտության կարևոր ասպեկտների, ինչպիսին են հավաստիության ստուգման և անվտանգության մասին տեղեկացվածությունը և վարքագիծը:
- Բացահայտել մեդիագրագիտության կարիքների վերաբերյալ թիրախային խմբի ինքնազնահատումը և համեմատել օբյեկտիվ գնահատման հետ:
- Իրականացնել համեմատական վերլուծություն խոցելի մեծահասակների մեդիագրագիտության վերբերյալ նախորդ տարվա ընդհանուր բացահայտումների և ներկայիս սպեցիֆիկ խմբերի վերաբերյալ արդյունքների միջև:
- Պարզել թիրախային խմբի մասնակցությունը մեդիագրագիտության տարբեր նախաձեռնություններին և արդյունքների կիրառելիությունը:
- Նկարագրել թիրախային խմբի՝ մեդիագրագիտության նոր նախագծերի մասնակցելու մոտիվացիան:

Հետազոտության շրջանակ

Որպեսզի արդյունքները համադրելի լինեն նախորդ հետազոտության արդյունքների հետ, այս ուսումնասիրությունը տեղեկատվության հավաքման և վերլուծության համար օգտագործել է տեղեկատվության ստացում – որոնում – ընկալում – գնահատում– պահպանում– փոխանցում – ստեղծում տրամաբանական շրջանակակեր:



Հետազոտության աշխարհագրական շրջանակը ընդգրկել է մայրաքաղաք Երևանը և երեք մարզեր՝ Տավուշ, Շիրակ և Գեղարքունիք: Հետազոտության թիրախային խումբը խոցելի մեծահասակներն են, ավելի կոնկրետ՝ «Մեդիագրագիտություն հասարակության խոցելի

մեծահասակների համար 2.0» ծրագրի թիրախային խմբերը՝ ՏԻՄ ներկայացուցիչները, պատերազմի մասնակիցները, ծնողները, ուսուցիչները:

Մեթոդ 7 ընտրանք

Հետազոտությունն իրականացվել է ֆոկուս խմբային քննարկումների մեթոդի օգտագործմամբ, որը հնարավորություն է տվել լսել ծրագրի թիրախային խմբերին և խորքային տեղեկատվություն հավաքել նրանց կարիքների վերաբերյալ: Թիրախային խմբերի մեդիագրագիտության կոմպետենտության աստիճանը հասկանալու և հնարավոր բացերը իդենտիֆիկացնելու համար, բացի ինքնազնահատումը (self-reported assessment), ֆոկուս խմբային քննարկման ժամանակ մասնակիցներին առաջարկվել են նաև պրակտիկ վարժություններ, որոնք օբյեկտիվորեն նկարագրում են մասնակիցների մեդիագրագիտության աստիճանը:

Հետազոտությունը ներառում է խոցելի մեծահասակների, մասնավորապես հինգ հիմնական խմբերի, որոնք հանդիսանում են ԴԿԿ Ինթերնեյշնալի գործընկեր կազմակերպությունների շահառուները:

| Թիրախային խումբ | Մարզ |
|-----------------------|-------------|
| Պատերազմի մասնակիցներ | Երևան |
| ՏԻՄ | Գեղարքունիք |
| Խառը խումբ | Տավուշ |
| Ծնողներ | Շիրակ |
| Ուսուցիչներ | Շիրակ |

Ֆոկուս խմբային յուրաքանչյուր քննարկման ներկա են եղել 7-11 մասնակից, որոնք հետազոտության մեջ ընդգրկվել են նպատակային ընտրանքով, այսինքն՝ ըստ նախապես սահմանված որակական տիպային չափանիշների համապատասխանության: Տվյալ դեպքում հիմնական չափանիշներն էին՝

- Պատկանելիությունը յուրաքանչյուր կենտրոնի համար սահմանված թիրախ խմբին: Խառը խմբի դեպքում համապատասխանությունն ծրագրի կողմից ձևակերպված խոցելի մեծահասակ սահմանմանը:
- Տարիք: Ուսուցիչների, ծնողների և ՏԻՄ ներկայացուցիչների համար 35-65 տարեկան, պատերազմի մասնակիցների և խառը խմբի դեպքում՝ 15-65:

Պետք է նշել, որ խմբերի միջև կար սեռային անհավասարակշռություն: ՏԻՄ ներկայացուցիչները և պատերազմի մասնակցիները³ միայն արական սեռի ներկայացուցիչներ էին, մինչդեռ մյուս երեք խմբերը ամբողջովին բաղկացած էին կանանցից:

Դաշտային աշխատանքները տեղի են ունեցել 2022թ. հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը:

Արդյունքների վերլուծության մոտեցում

³ Այս ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցել են նաև երկու իգական սեռի ներկայացուցիչներ, որոնք հիմնադրամի շահառուներ են, սակայն քանի որ նրանք չեն համապատասխանում մեր թիրախ խմբի չափանիշներին, նրանց տեսակետները չեն ընդգրկվել վերլուծության մեջ

Դաշտային աշխատանքների ընթացքում հավաքված տվյալները վերլուծվել են տեղեկատվության ստացում – որոնում – ընկալում – գնահատում – պահպանում – փոխանցում – ստեղծում շրջանակի տրամաբանությամբ: Վերհանված արդյունքները վալիդացնելու համար հատուկ ուշադրություն դարձվել նախորդ հետազոտության արդյունքներին: Առաջին հետազոտությունը վերհանել էր 10 հիմնական բացահայտումներ: Վերլուծությունը անդրադարձ է կատարում նոր ստացված տեղեկատվության համեմատությանը առաջին հետազոտության արդյունքում բացահայտած ագրեգացված արդյունքների հետ, մասնավորապես՝ սոցիալական մեդիայի օգտագործմանը, տեղեկատվության պասիվ կլանման հակվածությանը, տեղեկացվածության և վարքագծի անհամապատասխանությանը, համակարգված գիտելիքի բացակայությանը, տեղեկատվության ստուգման համար ջանքերի գործադրմանը, վտանգների մասին գիտելիքին, հուզական մոտեցմանը, մեդիայի տեսակների նկատմամբ նախընտրություններին և բովանդակության ստեղծման ակտիվությանը:

Հիմնական բացահայտումներ

Ստորև ներկայացված են հավաքագրված տվյալների վերլուծության արդյունքում դուրս բերված հիմնական բացահայտումները: Այս բացահայտումները խմբավորված են ըստ մեթոդաբանության մեջ նկարագրված վերլուծական շրջանակի, այն է՝ տեղեկատվության որոնումից և ստացումից սկսած մինչև տեղեկատվության ընկալում ու գնահատում, պահպանում, ինչպես նաև փոխանցում և ստեղծում: Գլուխն ավարտվում է մեդիագրագիտության կարիքների մասին բացահայտումներով:

Տեղեկատվության որոնում և ստացում

✓ Սոցիալական ցանցերը տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրն են:

Ինչպես կարելի էր ենթադրել, թիրախ խմբի ներկայացուցիչները ակտիվորեն օգտվում են սոցիալական մեդիայի հարթակներից: Սոցիալական ցանցերից ամենալայն տարածում ունեցողն ու ամենահաճախ օգտագործվողը ֆեյսբուքն է. բոլոր խմբերի մասնակիցներն առանց բացառության ֆեյսբուքյան օգտատերեր են: Ֆեյսբուքին հաջորդում է ինստագրամը, սակավաթիվ մասնակիցներ էլ հիշատակեցին LinkedIn, Telegram, Reddit և Odnoklassniki սոցիալական ցանցերը: Այս տվյալները համահունչ են 2021թ. արված մեդիագրագիտության կարիքների հետազոտության արդյունքներին: Ֆեյսբուքյան խմբերն ու էջերը տեղեկատվության հիմնական աղբյուրներն են: Օրինակ՝ Ազատության, 1-ին ալիքի ֆբ էջերը, Ժամանց, Խոսում են, Հայ զինվոր ֆեյսբուքյան էջերը մասնակիցների կողմից բերված օրինակներից են:

Ավելի փոքր թվով մասնակցիներ օգտվում են ինտերնետային կայքէջերից: Հնչեցին Ազատություն, Սպուտնիկ Արմենիա, Radar.am, Մեդիամաքս, Արմենպրես և Ավորրանյուզ, news.am լրատվականները, որպես վստահելի աղբյուրներ, որոնց հետևում են մի շարք մասնակիցներ: Մեկական մասնակիցներ էլ օգտվում են arlis.am, police.am և ԱԻՆ-ի կայքէջերից:

Չնայած կային մասնակիցներ, որոնք հեռուստացույց ընդհանրապես չեն դիտում վերջին տարիներին, այնուամենայնիվ, հատկապես ավելի մեծ տարիքի մասնակիցները դեռևս հետևում են հեռուստատեսությանը: Հեռուստաալիքներից նշվեցին Հ1-ը, Շանթը, Գյումրիի Ցայգը, ռուսական հեռուստաալիքները: Խմբերի համեմատության մեջ՝ առավել շատ հեռուստացույց

դիտում են ՏԻՄ ներկայացուցիչները և աշակերտների ծնողները: Մեկ մասնակից էլ՝ ՏԻՄ ներկայացուցիչ, սովորաբար ռադիոյից է տեղեկանում լուրերին:

Տեղեկատվության ստացման այլ տարբերակների մեջ էին դասախոսները, ծանոթներն ու ընկերները: Ընկերների միջոցով տեղեկատվություն ստանալը հիմնականում շեշտադրվեց պատերազմի մասնակիցների և/կամ նրանց ընտանիքի անդամների կողմից:

✓ **Մեծահասակները լրատվության պասիվ, իսկ մասնագիտությանն ու հետաքրքրություններին վերաբերող տեղեկատվության ակտիվ սպառողներ են:**

Տեղեկատվության որոնման և ստացման նկատմամբ ակտիվության մակարդակը կախված է տեղեկատվության տեսակից:

Մասնակիցների մի զգալի հատված ակտիվորեն որևէ տեղեկատվություն չի փնտրում կամ նպատակաուղղված որևէ լրատվական էջ չի բացում: Այս երևույթը հատկապես նկատելի էր պատերազմի մասնակիցների և ծնողների շրջանում: Նրանք նկատում և կարդում են այն տեղեկատվությունը, որը ցուցադրում է սոցիալական մեդիա հարթակը. «Ֆեյսբուքը ինչ բերեց՝ բերեց», «*ուղղակի թերթում ենք*»: Մասնակիցները միևնույն ժամանակ համաձայնեցին, որ եթե անգամ ակտիվորեն չեն հետևում լրատվական էջերի, այնքան շատ են կիսվողները, որ ակամայից տեղեկացված են դառնում: Եթե համեմատենք խմբերին, ՏԻՄ ներկայացուցիչները համեմատաբար ավելի ակտիվ են հետևում լրահոսին:

Մասնակցիների մի խումբ էլ կա, որ մասնակցում է աղբյուրների ընտրությանը ոչ անմիջական ձևով. ժամանակի ընթացքում մաքրել են իրենց նյութաֆիդում հայտվող էջերն ու խմբերը, և մնացել են միայն իրենց հետաքրքրող լրատվականները: Այս մոտեցումը հատկապես շեշտադրվեց խառը խմբում:

Մասնակիցները կարևորում են իրենց ոլորտին առնչվող տեղեկատվության հետևելը: Սա հատկապես նկատելի էր ուսուցիչների խմբում: Նրանք հետևում կամ անդամակցում են մասնագիտական խմբերի սոցիալական ցանցերում՝ հիմնականում ֆեյսբուքում և ինստագրամում, և փնտրում ինֆորմացիա գուգլում կամ վիքիպեդիայում: Բացի ուղղակի հետևելը՝ ոմանք նաև ակտիվորեն մասնակցում են այս մասնագիտական խմբերում ծավալվող քննարկումներին: Այսպես նրանք ծանոթանում և հետևում են իրենց ոլորտի նորամուծություններին: Միևնույն ժամանակ ուսուցիչները նկատեցին, որ երբեմն դժվար է լինում ֆիլտրել տեղեկատվության հոսքը անգամ մասնագիտական ոլորտում:

Շատ մասնակիցներ էլ ակտիվորեն հետևում են իրենց հետաքրքրող ոլորտին առնչվող տեղեկություններին, ինչպիսին են խոհարարությունը, առողջապահությունը, տարբեր իրերի պատրաստումը: Պատերազմի մասնակիցներն էլ հիմնականում հետաքրքրված են տեխնոլոգիաներով և տեղեկատվություն են փնտրում այդ ուղղությամբ:

✓ **Մեծահասակների մոտ գրանցվել է վերաբերմունքի փոփոխություն քաղաքական լրատվության սպառման տեսանկյունից՝ պայմանավորված պատերազմով:**

Խմբերի մեծ մասում (պատերազմի մասնակիցներ, ուսուցիչներ, խառը խումբ) նշվեց, որ պատերազմից հետո մասնակցիները փոխել են իրենց մոտեցումը լուրերի որոնման ու սպառման նկատմամբ: Պատերազմի օրերին շատ ակտիվորեն հետևել են մեդիային՝ և՛ համացանցով, և՛ հեռուստատեսությամբ, ու ակտիվորեն տարածել տեղեկատվություն:

«Պատերազմի օրերին էջս գործիք էր դարձնել, որ տեղեկատվություն տարածեի տարբեր լեզուներով՝ անգլերեն, ռուսերեն, չեխերեն»:

Խառը խումբ, Դիլիջան

Իսկ պատերազմից հետո շատերը խուսափում են քաղաքական լրահոսին հետևել, ինչպես իրենք են նկարագրում՝ *«հիասթափվել ենք», «թևաթափ ենք եղել», «չենք ուզում ծանրաբեռնել մեզ քաղաքականությամբ»* :

Այս խնդիրը հատկապես զգայուն էր պատերազմի հետ անմիջական կապ ունեցող մասնակցիների շրջանում: Նրանք լուրերին չեն հետևում, և դա առաջին հերթին պայմանավորված է պատերազմով. պատերազմից հետո Էմոցիոնալ լարվածությունից են խուսափում: Մասնակիցներից մեկը նշեց՝ եղբորը կորցնելուց հետո ցնցել է բոլոր լուրերի էջերը: Մյուսները նույնպես խուսափում են:

«Կռվից հետո լուրերի չեմ հետևում: 1,5 տարի է ընդհանրապես ոչ մի լուրի չեմ հետևում, ընդհանրապես: Ինչ ես գիտեմ, ինչ որ մի տեղից լսած ա, Էն էլ չեմ հավատում: Ու չեմ էլ փորձում ստուգեմ, քանի որ դա ինձ արդեն չի հետաքրքրում»:

Պատերազմի մասնակից, Երևան

Տեղեկատվության ընկալում և գնահատում

✓ Մասնակիցներն ունեն անվստահություն մեդիայի նկատմամբ:

Մասնակիցների զգալի մասը թերահավատությամբ է վերաբերվում մեդիա աղբյուրներին և նրանց հաղորդած լուրերի հավաստիությանը: *«Սաղ կեղծ ա», «ես չեմ հավատում»* արտահայտվում էին նրանք: Այս անվստահությունը առաջացել է ոչ թե կոնկրետ աղբյուրների կամ բովանդակության ստուգման արդյունքում, այլ ավելի շուտ կանխակալ վերաբերմունք է: Ընդ որում այս մոտեցումը անկախ է աղբյուրի ընտրությունից: Մասնակիցների այս հատվածը չի նշում աղբյուրներ, որոնց կարող է համարել քիչ թե շատ վստահելի: Ինչպես մասնակցիներից մեկն արտահայտվեց,

«Մինչև վերջ ոչ մեկին չեմ վստահում, միշտ մնում է կասկածամտության մի նշույլ»:

Ուսուցիչ, Գյումրի

Որոշ մասնակիցներ էլ կարծում են, որ ցանկացած աղբյուր, մասնավոր լինելով, միայն իր շահերին է հետևում և չի կարող անկողմնակալ տեղեկատվություն տրամադրել.

«Էսօր ոսկե միջին չկա և ամեն մեկը թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական ոլորտներում փորձում ա իրան PR անել»:

Պատերազմի մասնակից, Երևան

✓ Մասնակիցներին բնորոշ է զգացմունքային արձագանքը տեղեկատվությանը:

Ֆոկուս խմբերի մասնակիցները թե՛ քննարկման ընթացքում, թե՛ վարժության մեջ հաճախ են օգտագործել Էմոցիոնալ բնույթ ունեցող արձագանքներ, օրինակ *«սիրտս կկանգնի», «կջղայինանամ», «կներվայինանամ», «կգարմանամ», «անգամ կարտասվեմ»:* Ինչպես նշեց ուսուցիչներից մեկը, *«մի ժամանակ զայրույթից մեկնաբանություն էի գրում ու պատասխան էի ստանում»:*

Չգացմունքայնությունը պատճառներից մեկն է, որ թիրախ խմբերի որոշ ներկայացուցիչներ խուսափում են հետևել լրատվությանը: Մասնակիցներից մի քանիսը մի քանի անգամ նշեցին, որ իրենք լուրերին չեն հետևում, քանի որ միացնում են ու նյարդայնանում:

«Ես չեմ տրամադրվում հատուկ լուրեր նայել, գիտեմ՝ ամուսինս կջղայնանա: Սերիալներ եմ նայում, ինքնըստինքյան ջղայնացնող են [ծիծաղում է]... Ավելի լավ է ետ ժամանակը տրամադրեմ էրեխուս հետ զբաղվել»:

Ծնող, Գյումրի

Այս բացահայտումը վալիդացնում է 2021թ. իրականացված կարիքների գնահատման ժամանակ դուրս բերած արդյունքներից մեկը, ըստ որի **հետազոտությանը մասնակցած մեծահասակների մոտ գերակայում էր մեդիայի օգտագործման հուզական մոտեցումը:**

✓ **Մասնակիցների մոտ նկատվել է վերահաստատման կողմնակալություն (confirmation bias):**

Մի քանի դեպքերում ակնհայտ դարձավ մասնակիցների մոտ արտահայտվող վերահաստատման կողմնակալությունը, այն է՝ տեղեկատվությունը ընկալելը և դրան գնահատական տալը արդեն իսկ ունեցած համոզմունքների տեսանկյունից: Օրինակ, Վարժություն 2-ի ժամանակ նմուշներից մեկը ներկայացնում էր Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ֆեյսբուքյան էջի հայտարարությունն Քովիդ-19-ի դեմ խթանիչ դեղաչափի վերաբերյալ (Հավելված 3): Մասնակիցների մի զգալի մաս տեղեկատվության բովանդակության և աղբյուրի հավաստիությունը գնահատում էր ըստ իր ունեցած դիրքորոշման Քովիդ-19-ի և պատվաստումների վերաբերյալ, առանց անգամ մանրամասն կարդալու նյութը: Այսինքն, նրանք համապատասխանեցնում էին տվյալ նմուշի նկատմամբ իրենց վերաբերմունքը իրենց՝ արդեն իսկ ձևավորված համոզմունքներին: Օրինակ՝ մասնակիցներից մեկը չի հավատում հրապարակվածի հավաստիությանը, քանի որ ունի պատվաստանյութերի վերաբերյալ արդեն ձևավորված կարծիք՝ *«չեմ հավատում, պատվաստանյութը բիզնես է»:*

Նույն երևույթը տեսանելի էր նաև նմուշ 2-ի դեպքում: Չնայած կայքի ակնհայտ «մատնող» հատկանիշներին, որոշ մասնակիցներ կասկածի տակ էին դրել հավաստիությունը զուտ որովհետև չեն կարծում, որ նախագահը կարող է գաղնիքներ բացել, *«Վ. Խաչատրյանը իրավունք չունի գաղտնիքներ բացել»:*

✓ **Մասնակիցները հիմնականում ինտուիտիվ են գնահատում տեղեկատվության հավաստիությունը:**

Ինչպես առաջին հետազոտությունն էր **վերհանել, այս ուսումնասիրությունը ևս եզրահանգեց, որ թիրախ խմբերի մասնակիցները որոշակի պատկերացում ունեն հատկանիշների մասին, որոնք կարող են հուշել տեղեկատվության հնարավոր ոչ հավաստիության մասին:** Այնուամենայնիվ, այդ գիտելիքները համակարգված չեն, հատվածային են և մեծամասամբ հիմնվում են մասնակիցների անձնական փորձի կամ ինտուիցիայի վրա:

«Արդեն ինստինկտ ունենք կեղծ լուրը տարբերելու, չեմ էլ կարող բացատրել»:

Ուսուցիչ, Գյումրի

Բոլոր թիրախային խմբերում թվարկվել են որոշ հատկանիշներ, որոնք կարող են կասկածի տակ դնել նյութի արժանահավատությունը, այնուամենայնիվ ոչ մի խումբ չի ներկայացրել սպառիչ ցանկ: Եթե ընդհանրացնենք բոլոր խմբերի քննարկումները, մասնակցիների կողմից առաջարկվել են հետևյալ ուղղությունները, որոնց պետք է ուշադրություն դարձնել՝ հասկանալու համար տեղեկատվության հավաստիությունը.

- **Ուշադրություն դարձնել վերնագրին**- սա մասնակիցների կողմից ամենահաճախ հնչած հատկանիշն է: Մասնակիցները նկատել են, որ երբեմն որոշ էջեր կամ կայքեր օգտագործում են չափազանց ցածր վերնագրեր՝ որպես դեպի իրենց էջը գրավելու խայծ: Օրինակ *«դրանից հետո չեք պատկերացնի, թե ինչ կատարվեց...»*, նման վերագիր և հատկապես վերնագրի վերջում բազմակետեր տեսնելիս ուսուցիչներից մեկը դադարեցնում է կարդալը: Կամ օրինակ *«այնպիսի վերագիր էին գրել, որ կարծես թե Գեղարքունիքի մարզում պատերազմ է սկսվել, բայց բացեցի և տեսա, որ ավտովթարի մասին է խոսքը»* (Ծնող, Գյումրի): Մասնակիցները հավաստիացնում են, որ իրենք զգույշ են լինում նման վերնագրեր տեսնելիս:
- **Ուշադրություն դարձնել աղբյուրին**- որոշ մասնակիցներ ընդգծեցին աղբյուրի վստահելի լինելու կարևորությունը: Կարևոր է ուշադրություն դարձնելը, թե արդյոք կայքի վրա կա կոնտակտային տվյալներ, օրինակ հեռախոսահամար: Մի մասնակից էլ ուշադրություն է դարձնում կայքի անունին, քանի որ կեղծ էջերը փորձում են իրենց անունը նմանեցնել հայտնի լրատվականներին: Ինչ վերաբերվում է անհատների գրառումներին, մասնակիցներից մեկը կարծում է, *«եթե կիսվողը Էմոցիոնալ, Նաիվ մարդ է, ապա ուշադրություն պետք չէ դարձնել»* (ՏԻՄ, Մարտունի):
- **Ապավինել տրամաբանությանը**- մի քանի մասնակցի էլ օգնում են գիտելիքներն ու տրամաբանությունը, օրինակ, երբ գրված է ժողովրդական միջոց ինչ-որ լուրջ հիվանդություն բուժելու համար, ըստ ուսուցիչներից մեկի, արդեն հասկանալի է, որ դա հնարավոր չէ:
- **Բովանդակության դետալներ**- երկու ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում որոշ մասնակիցներ հիշեցին, թե ինչքան կարևոր է նյութի գրագետ գրված լինելը. անգամ տառասխալները կարող են ազդանշան տալ ոչ հավաստի լինելու մասին:

Չնայած քննարկումների ընթացքում մասնակիցները ցուցաբերում էին իմացության որոշակի մակարդակ հավաստիության գնատահման հարցում, բայց **պրակտիկ վարժության ժամանակ Նույն մասնակիցները անվստահությամբ էին գնահատում նմուշի հավաստիության աստիճանը, Նույնիսկ տալիս էին սխալ պատասխաններ:**

- ✓ **Մասնակիցները հիմնականում երեք տիպի արձագանք են տալիս հնարավոր կեղծ տեղեկատվության հանդիպելիս՝ անտեսել/սպասել, ստուգել, արգելափակել, բայց գերակշռում է ոչ նախաձեռնողական վարքագիծը:**

Հարցին, թե ինչպես են վարվում կեղծ կամ ոչ հավաստի տեղեկատվության հանդիպելիս՝ ամենահաճախ տրվող պատասխանը ուղղակի անտեսելն ու անցնելն է՝ առանց քայլեր ձեռնարկելու.

«Կթերթենք, կանցնենք, մենք էտ տարիքին չենք, որ ինչ-որ բան անենք»:

Ծնող, Գյումրի

Մասնակցիների մի խումբ էլ ուղղակի սպասում է մինչև մյուս լրատվականներն էլ դրա մասին հաղորդեն: Այս մասնակիցները համոզված են, որ այստեղ նախաձեռնողականություն հարկավոր չէ: Սա մասնավորապես հատուկ էր ծնողներին:

Մասնակիցների մի հատված, այնուամենայնիվ, կարևորում է ստուգելը: Օրինակ վարժություն 1-ում հաճախ են պատասխանել, որ առաջին հերթին կստուգեն/ կհամոզվեն, որ տեղեկատվությունը ճիշտ է, սակայն քչերն են նկարագրել, թե հատկապես ինչ քայլեր կձեռնարկեն այդ տեղեկատվությունը ստուգելու համար:

Քննարկումների ընթացքում հնչեցվել են ստուգման մի քանի մեխանիզմներ: Մասնակցիների մի մասը տեղյակ է, որ պետք է ստուգել, թե առկա է արդյոք տեղեկատվությունը իրենց համար վստահելի այլ աղբյուրներում: Խառը խմբի մասնակիցներից մեկը օրինակ բերեց,

«Մեր ընկերներից մեկը զանգեց ասեց, ոնց որ մեր բարեկամը ավտովթարի ա ենթարկվել: Մենք էլ չուզեցինք անմիջապես զանգել այդ բարեկամին, այլ փորփրեցինք ու Շամշյանի էջում տեսանք, որ լրիվ ուրիշ համարներով մեքենա ա վթարի ենթարկվել, ոչ թե մեր բարեկամինը»:

Խառը խումբ, Դիլիջան

Մեկ այլ մոտեցում է հետաքրքրվել ծանոթներից, քննարկել ընկերների կամ ընտանիքի հետ կամ անձնական կամ մասնագիտական կապերին.

«Օրինակ եթե լուրը վերաբերվում ա ասենք Տավուշի մարզին, կփորձեմ զանգել Տավուշի իմ ծանոթներին և իրանցից ճշտել»:

Պատերազմի մասնակից, Երևան

Հատկապես պատերազմի մասնակիցներն ու խառը խումբը ծանոթների միջոցով հավաստիանալը ամենահուսալի տարբերակն են համարում:

Մասնակիցները շատ հաճախ գիտեն, թե ինչ պետք է անել, բայց թե ինչպես պետք է դա իրականացնել ոչ միշտ են տեղյակ կամ ոչ միշտ են գրազետ իրականացնում: Օրինակ՝ մի մասնակից ակտիվորեն կիրառում է տեղեկատվությունը ստուգելու հետևյալ մեթոդը.

«Կիսվեմ գը, մի հատ էլ լայքեմ գը, որպեսզի ֆեյսբուքյան էջս իրան լաասավ մանրամասն նայե ու վերջում ինձի sms-ով կուգա, որ էս լուրը չի համապատասխանում իրականությանը: Նենց լավ է»:

Ծնող, Գյումրի

Երբ արդեն համոզված են լուրի կեղծ կամ ոչ հավաստի լինելու մասին, մասնակիցների այն մասը, որը չի անտեսում ու անցնում առաջ, մեկնաբանություն է թողնում տեղեկատվության տակ կամ էլ արգելափակում է այդ էջը: Ուսուցիչներից մեկն օրինակ բերեց, թե ինչպես աշնանային արձակուրդների ավարտին ուսուցիչները կիսվում էին նախարարի հրամանով, որ արձակուրդները երկարացվում են, բայց ուշադրություն չէին դարձնում ամսաթվին, որ դա նախորդ տարվա հրաման էր: Այս ուսուցիչը չնայած չի սիրում մեկնաբանություններ գրել, այս դեպքում ստիպված մի քանիսի տակ գրել է, որ նայեն ամսաթվին: Մասնակիցների մի մասն էլ համաձայնեցին, որ

խուսափում են մեկնաբանություն թողնելուց, քանի որ շատ հաճախ դա վերաճում է տհաճ բանավեճի:

Որոշ մասնակիցներ անմիջապես արգելափակում են ապատեղեկատվություն տարածող էջին, մի մասնակից էլ քննում է ընկերների ցանկից, եթե տարածողը ֆեյսբուքյան ընկեր էր: ՏԻՄ ներկայացուցիչների և ծնողների խմբի կողմից մտահոգություն հնչեց, որ արգելափակած էջերը որոշ ժամանակ անց կրկին հայտնվում են: Ուսուցիչներից ոմանք չգիտեին, թե ինչպես կարելի է էջ արգելափակել, և տեղյակ մասնակիցները փորձեցին բանավոր բացատրել նրանց:

Այն հարցին, թե որքանով են մասնակիցները վստահ իրենց՝ կեղծ լուրերը/ապատեղեկատվությունը բացահայտելու ունակության վրա, ոչ մի խումբ մինչև վերջ չէր վստահում իր հմտություններին:

Տեղեկատվության պահպանում/փոխանցում/ստեղծում

- ✓ **Տեղեկատվության պահպանման հնչեցված մոտեցումները հիմնականում նույնն են բոլոր խմբերում, սակայն խմբի մասնակիցներից ոչ բոլորն են տիրապետում մեթոդների բազմազանությանը:**

Պահպանման մեթոդներից նշվեցին screenshot-ները, իրենք իրենց հղումը կամ տեղեկատվությունը ուղարկելը, ընկերներին հղումը ուղարկելը, bookmark անելը, ֆեյսբուքում կամ ինստագրամում պահպանելը, կարևոր հղումները հեռախոսի նոթերի մեջ պահպանելը, տեքստի դեպքում word-ում կրկնօրինակելը կամ տեղեկատվությունը ներբեռնելը համակարգչում: Հնչեց նաև կարևոր տեղեկատվությունը թղթային տեսքով պահելը՝ տեքստը կամ նկարը տպված: Սովորաբար մասնակիցներից յուրաքանչյուրն ունի իր նախընտած մոտեցումը, որը պարբերաբար օգտագործում է: Ավելի մեծահասակ մասնակիցները նշում էին, որ իրենք տեղեկատվության պահպանելու կարիք չունեն: Սակայն ոչ բոլոր մասնակիցներն էին տեղյակ մեթոդների շարքին, և մի քանի ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում մասնակիցներն անգամ սկսեցին միմյանց բացատրել պահպանելու տարբեր մեթոդները:

- ✓ **Մասնակիցները հակված են կիսվել միայն «դրական», «օգտակար», «լավ», «ճիշտ» տեղեկատվությամբ, այնուամենայնիվ, այդ հատկանիշների չափանիշները այդքան էլ հստակ չեն:**

Մասնակիցների մեծ մասը հավաստիացնում է, որ շատ չի տարածում տեղեկատվություն: Նրանց մի մասը երբեք չի կիսվում որևէ գրառումով սոցիալական ցանցերում, մյուս մասն էլ դա անում է շատ հազվադեպ: Մասնակիցներից մի քանիսը բոլորովին չեն կիսվում տեղեկատվությամբ, քանի որ վախենում են՝ կարող է պարզվի, որ ճիշտ չէր, մի մասն էլ չի կիսվում, քանի որ *«այդպիսի բնավորություն չունի» (ՏԻՄ, Մարտունի)*: Սոցիալական մեդիայում տեղեկատվությամբ չկիսվող մասնակիցները նախընտրում են տեղեկատվություն փոխանցել ոչ թե հանրայնորեն, այլ անմիջականորեն այն մարդկանց, ում տվյալ տեղեկատվությունը կհետաքրքրի: Դա անում են կամ անձնական նամակով՝ ուղարկելով հղումը, կամ էլ անձնական շփումների միջոցով:

Այնուամենայնիվ, կային մասնակիցներ, որոնք ակտիվորեն կիսվում են տեղեկատվությամբ իրենց սոցիալական մեդիա էջերում:

«Ինչի՞ չկիսվեմ: Եթե գիտեմ, որ լուրը քաղաքին է պատկանում, ինչ-որ միջոցառում է, անպայման կկիսվեմ, որ մյուսներն էլ գիտենան ու մասնակցեն: Էն ինչը որ կհասգնամ, կկիսվիմ»:

Ծնող, Գյումրի

Ֆեյսբուքյան մեծ լսարան ունեցող մեկ այլ մասնակից (3000-ից ավելի \$բ ընկեր) ակտիվորեն կիսվում է «ճիշտ» տեղեկատվությամբ: Նրա ֆեյսբուքյան ընկերները գնահատում են սա ու ասում են, որ միշտ հետաքրքիր է հետևել նրա էջին: Նա գտնում է, որ *«լավ բաները անպայման պետք է տարածել»:*

Մասնակիցները վստահեցնում են, որ փոխանցում են միայն ստույգ տեղեկատվություն, որի վրա վստահ են: Նրանք սիրում են կիսվել օգտակար կամ ինֆորմատիվ տեղեկատվությամբ, որը գտնում են՝ մյուսներին կարող է հետաքրքրել: Մի այլ հատկանիշ էլ տեղեկատվության քաջալերող ու ոգևորող լինելն է:

Մասնակիցները օրինակներ բերեցին իրենց վերջին կիսված հրապարակումներից: Նրանցից մեկը կիսվել էր հումորային բովանդակությամբ (Արզաբանյանի արտահայտություններից մեկը), մյուսը գյուղերից մեկում ստացված մեծ քանակությամբ մեղրաբերքի մասին, մեկն էլ՝ Տաթևի ճանապարհի շինարարության վերաբերյալ, *«որպեսզի երևա, որ էս երկրում մի բան փոխվում է»*, նաև նախարարներից մեկի՝ չորրորդ երեխա ունենալու լուրը, որպեսզի մյուսներն էլ տեսնեն և օրինակ վերցնեն: Ուսուցիչները կիսվում են նաև աշակերտների հաջողությունների մասին ինֆորմացիայով, օրինակ՝ պարի համերգի մասին հրապարակումն են կիսել, մեկ այլ ուսուցիչ էլ կրթաթոշակի դրամահայթայթման էջով: Արեն Մեիրաբյան հիմնադրամի շահառուներն էլ կիսվել էին հիմնադրամի հրապարակումներով:

Կային մասնակիցներ, որոնք հատուկ շեշտադրեցին, որ երբեք չեն կիսվում վթարների մասին տեղեկատվությամբ, *«սարսափում եմ, երբ կիսվում են վթարների մասին տեղեկատվությամբ»:*

- ✓ **Մասնակիցները ավելի հաճախ սպառում կամ փոխանցում են տեղեկատվություն, քան ստեղծում, իսկ ստեղծելու դեպքում էլ երբեմն չեն գիտակցում:**

Հինգ ֆոկուս խմբային քննարկումների խմբերից մասնակիցներից ընդամենը երեքը նշեցին, որ երբեմն հենց իրենք են գրառումներ կատարում, ոչ միայն կիսվում են այլոց հրապարակումներով:

«Այնպիսի գրառումներ եմ անում, որ մարդ սքրոլ անելուց ուղղակի ժպտա ու անցնի գնա, իմ կյանքին վերաբերվող, բայց ավելի թեթև»:

Խառը խումբ, Դիլիջան

Այս մասնակցի վերջին գրառումը իր տեսած երազի մասին էր: Նույն մասնակիցն ունի նաև իր փոքր արտադրության վերաբերյալ ֆեյսբուքյան էջ, բայց գտնում է, որ բավականաչափ ժամանակ չի հատկացնում այդ էջի վարմանը: Մի ուրիշ մասնակից էլ ֆոտոէջ ունի, որտեղ իր արած լուսանկարներն է տեղադրում:

Այս բացահայտումը **վալիդացում է նախորդ տարի իրականացված հետազոտության արդյունքը և ընդհանուր առմամբ համահունչ է համաշխարհային միտումներին, երբ տեղեկատվության սպառումը եականորեն գերիշխում է բովանդակության ստեղծմանը:**

Սակայն այստեղ ակնհայտ է դառնում մի ուրիշ խնդիր: Մասնակիցները հաճախ չեն գիտակցում, թե ինչն է համարվում բովանդակության ստեղծում և հրապարակած լուսանկարները, ֆեյսբուքյան և ինստագրամյան պատմությունները, թողած մեկնաբանությունները երբեմն չեն ընկալում որպես իրենց ներդրումը առցանց կոնտենտին: Այսպես, ծնողների խումբը հավաստիացնում էր, որ իրենք բովանակություն չեն ստեղծում, հրապարակումներ չեն անում, բայց երբ նրանց հարց տրվեց երեխաների լուսանկարների վերաբերյալ, պարզվեց՝ նրանց մեծ մասը տեղադրում է դրանք սոցիալական մեդիայում, այն էլ՝ առանց վերջիններիս համաձայնությունը հարցնելու:

- ✓ **Մասնակիցների մի մասը ընդունում է, որ կիսվել է ոչ հավաստի տեղեկատվությամբ, բայց դժվար է գնահատել, թե որքանով են նրանք կարողացել վերացնել դրա հնարավոր հետյանքները:**

Մի քանի մասնակիցներ մտաբերեցին դեպքեր, երբ կիսվել են կեղծ, ոչ հավաստի կամ հին տեղեկատվությամբ: Մասնակիցներից մեկը, օրինակ, վերջերս կիսվել էր ինչ-որ հայտնի մարդկանց երեխաների երգով, որից հետո ֆեյսբուքը *«Նկատողություն էր արել, որ էջը ճիշտ չէ»*: Մի այլ մասնակից էլ մեքենայության «գոհ» էր դարձել և լրացրել էր իր տվյալները սուպերմարկետներից մեկի իբր թե խաղարկությանը մասնակցելու համար և այդ հայտարարությամբ կիսվել էր իր էջում մյուսների համար:

Նման փորձ ունեցող բոլոր մասնակիցները նշեցին, որ տեղեկատվության կեղծ լինելը պարզելուց հետո ջնջել են գրառումները իրենց էջերից: Որոշ դեպքերում նաև արգելափակել են էջը, որը տարածել էր ոչ արժանահավատ նյութը: Ոչ միշտ են նախորդ գրառման կեղծ լինելու վերաբերյալ նոր հերքող հրապարակում անում:

Չնայած հավաստիացմանը, որ ջնջում են ոչ հավաստի տեղեկատվությունը իրենց էջից, ֆեյսբուքյան ակտիվ օգտատերերից մեկի էջի դիտարկումը ցույց տվեց, որ էջում հանրայնորեն կիսված է հրապարակմամբ, որը ֆեյսբուքը իդենտիֆիկացրել է որպես կեղծ:

Տեսակետ հնչեց, որ քանի որ հիմա բևեռացված է հասարակությունը, ինչպիսին էլ լինի տեղեկատվությունը, միշտ էլ կգտնվի դրա սպառողը, հետևաբար, եթե անգամ սխալ է տեղեկատվությունը, *«դու դրա պատասխանատվության տակ չես մնա» (Պատերազմի մասնակից, երևան)*:

Կեղծ տեղեկատվություն տարածելու դեպքերից խուսափելու համար մի քանի մասնակից նշեց, որ կիսվում են տեղեկատվությամբ միայն մտերիմների հետ, ընդ որում նախընտրում են տեղեկատվություն ուղարկել անձնական նամակով, այլ ոչ թե կիսել հանրայնորեն:

- ✓ **Տեղեկատվություն պահելիս կամ շրջանառելիս առաջացող հնարավոր վտանգները մասնակիցները պատկերացնում են հիմնականում երկրի անվտանգության տեսանկյունից և ոչ այնքան ամենօրյա մակարդակում:**

Բոլոր խմբերում հնարավոր վտանգները քննարկելիս առաջին արձագանքը հիմնականում օրինակներն էին պատերազմից, թե ինչպես լուսանկարների, նյութերի տարածումը կարող էր գործիք դառնալ թշնամու ձեռքում և վտանգել բանակի և երկրի անվտանգությունը: Օրինակ՝ անզգույշ նկարը ռազմական հրթիռի հետ, որը կարող է կորոդիմատներ մատնել, կամ զինվորների անմեղ թվացող նկարները կարող են տեղեկություն տալ տարածքի և տեղակայման մասին:

Երբ խմբերին հարցվում էր առօրյա մակարդակում առաջացող հնարավոր վտանգների մասին, նրանցից ոմանք նոր սկսում էին մտաբերել դեպքեր: Այստեղ պետք է նշել, որ խմբերի պատկերացումները վտանգների մասին համաչափ չէին, և կային խմբեր, որոնք առօրյա վտանգների մասին թյուր պատկերացումներ ունեին:

«Եթե էջի նորմալ է, ամեն ինչ գրանցած է, ամբողջ տեղեկությունը քեզնից կա՝ հեռախոսահամարով, եթե գրառում անես, որ ինչ-որ մեկին դուր չգա, ապա կարող եմ էջի մեջ մտնել, հեռախոս հասցե գտնել, զանգել բերնի գալացածը ասել, զնալ քիթ ու մոռլթը ջարդել, եթե նորմալ էջ է»:

Ծնող, Գյումրի

Հատկանշական է, որ պատերազմի մասնակիցները չեն պատկերացնում, որ բացի երկրի ու բանակի անվտանգության ոլորտներից, իրենց և մյուսների կիսած առօրյա տեղեկատվությունը կարող է որևէ մեկին վտանգի տակ դնել: Այս գաղափարը անգամ ծիծաղելի է նրանց համար:

«Դժվար մեր նկարը ինչ-որ մեկի համար վտանգավոր լինի»:

«Կարող ա ասեն էս խանութում շորիկները 1000 դրամ են, մի հատ աղջիկ վեր կենա զնա, տեսնի 1500 դրամ ա, դրա ի՞նչն ա վտանգավոր»:

Պատերազմի մասնակիցներ, Երևան

Մասնակիցներ էլ կային, որոնք հիշեցին վտանգներ պարունակող հաղորդակցությունն իրենց կողմից շրջանառած տեղեկատվության պատճառով: Դիլիջանի խառը խմբի մասնակցիներից մեկը լուսանկարել էր քաղաքի պատմամշակութային շինություններից մեկը, որը կիսաքանդ է, և նկարը տեղադրել էր համացանցում:

«Նկարը բում առաջացրեց և մարդիկ սկսեցին քննարկել, ու շատ մեկնաբանություններ են եղել, թե ինչու է նման պատմամշակութային շենքը անհնամամացել: Հաջորդ օրը ստացա անձնական նամակ մեսինջերով, որ ինդրում եմ հեռացրեք նկարը, այլապես իրեն [գրողին], կհեռացնեն աշխատանքից, քանի որ ինքն է պատասխանատու այդ շենքի համար»:

Խառը խումբ, Դիլիջան

Լուսանկարիչը հեռացրել է նկարը՝ չուզելով, որ այդ աշխատակիցը տուժի:

Մեկ այլ մասնակից էլ օրինակ բերեց իր փորձից: Նրա ֆեյսբուքյան ընկերներիցս մեկը, որին մասնակիցը վստահում է, գրառում էր արել սուպերմարկետներից մեկի մասին՝ քննադատելով աշխատողների համար նախատեսված աշխատանքային պայմանները: Մասնակիցը մեկնաբանություն էր թողել այդ գրառման տակ՝ նշելով, որ

«Նույն ողորմելի վիճակը Մարտունու մասնաճյուղում է»: Քիչ անց ստացա հեռախոսազանգ. Դուք ինչ իրավունքով եք սուպերմարկետի մասին գրել «ողորմելի վիճակ»: Այդ արտահայտության համար Ձեզ դատի կտանք և կպահանջենք դրամական փոխհատուցում»:

ՏԻՄ ներկայացուցիչ, Մարտունի

Այսինքն, խմբերում կան մասնակիցներ, որոնց տեղյակ են վտանգների մասին, անգամ իրենց իսկ փորձով առչվել են դրանց հետ, բայց միևնույն ժամանակ կան մասնակիցներ, որոնք չեն գիտակցում հնարավոր սպառնալիքները, որ կարող է ունենալ տեղեկատվության պահումն ու շրջանառումը ազգային անվտանգությունից գատ:

Մեդիագրագիտության դիտարկված 7 ընկալվող կարիքները

✓ Մասնակիցները հաճախ ծանոթ չեն մեդիագրագիտության կոնցեպտին:

Առհասարակ, մասնակիցների մոտ նկատվեց մեդիագրագիտության բառապաշարի, տերմինների իմացության թերացումներ: Սա նկատելի էր թե՛ քննարկումների ընթացքում, թե՛ վարժությունների ժամանակ: Մեդիագրագիտություն, մեդիա, աղբյուր, բովանդակության ստեղծում եզրույթներին մասնակիցներից ոչ բոլորն էին ծանոթ: Օրինակ՝

«Ես մեդիայով էղբան չեմ հետաքրքրվում, հիմնականում լրատվություն եմ կարդում»:

ՏԻՄ ներկայացուցիչ, Մարտունի

Վարժություն 2-ի ժամանակ, երբ մասնակիցներին հարցվում էր, թե որն է տեղեկատվության աղբյուրը, հազվադեպ չէին դեպքերը, երբ մասնակիցները չէին կարողացել պարզել և նշել աղբյուրը: Նրանք կամ բաց էին թողել հարցը, կամ օրինակ՝ նշել էին *«ՀՀ Նախագահ», «Նմուշ 1», «լրատվական կայք»* և այլն:

Բացառությամբ երեք հոգու՝ թիրախ խմբերի ներկայացուցիչները չեն մասնակցել մեդիագրագիտության որևէ դասընթացի կամ միջոցառման:

✓ Մասնակիցները ոչ միշտ են մոտիվացված մասնակցելու մեդիագրագիտության դասընթացներին:

Հարցին, թե կուզենային մասնակցել մեդիագրագիտության դասընթացի, որոշ խմբերում անմիջապես դրական արձագանք չէր հնչում: Որոշներն անգամ տարակուսում էին՝ *«մեր ինչ տարիքն է, ցահելի բան է»:*

Այնուամենայնիվ, գտնվեցին նաև մասնակիցներ, որոնք նշեցին հմտություններ, որ կուզեին բարելավել: Այդ կարիքների շարքում են փաստերի ստուգումը, հավաստի և ոչ հավաստի/կեղծ տեղեկատվության տարբերակումը, սոցիալական մեդիայից գրագետ օգտվելու կանոնները: Նշվեցին նաև տարբեր հավելվածներից օգտվելու անվտանգությունը, անգամ համակարգչային գիտելիքները, քանի որ դրանք, իրենց կարծիքով, կստիպեն նաև մեդիագրագետ դառնալ: Ուսուցիչները կուզեն սովորել, թե ինչպես գտել վստահելի կայքերը, որոնցից կարելի է ուսումնական նյութեր վերցնել: Իսկ դասղեկները, որոնց դասղեկական ժամում ընդգրկված է նաև մեդիագրագիտության ուսուցում, կուզենային որոշակի ուղղորդում այս հարցում, քանի որ իրենք են պատասխանատու ուսումնական նյութերի ընտրության և ուսուցման համար:

Դիլիջանի խառը խումբը և ուսուցիչներն ամենամոտիվացվածն են սովորել նոր հմտություններ: Նշվեց, որ Նույնիսկ նրանց համար, ովքեր շատ թե քիչ հասկանում են սոցիալական մեդիայից, միևնույնն է, դրանք օրեցօր փոխվում և կատարելագործվում են և պետք է սովորել ճիշտ օգտվել:

Եզրակացություններ և առաջարկություններ

Հետազոտության արդյուքների հիման վրա առաջ քաշված եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացված են ստորև աղյուսակում՝ յուրաքանչյուր եզրակացության համապատասխանեցնելով առաջարկություն:

| Եզրակացություն | Առաջարկություն |
|--|---|
| <p>Քանի որ մասնակիցների ճնշող մեծամասնությունը չունի ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթություն մեդիագրագիտության ոլորտում, նրանց գիտելիքները տեղեկատվության ստուգման, աղբյուրների հավաստիության գնահատման, հնարավոր ռիսկերի և վտանգների բացահայտման և դրանց նվազեցնելուն ուղղված քայլերի մասին համակարգված չեն, հատվածային են և հաճախ կախված են մասնակիցների «հոտառությունից»:</p> | <p>Հաշվի առնելով այս հանգամանքը՝ առաջարկվում է համակարգային մոտեցմամբ դասընթաց, որը կհավաքի փազվի բոլոր կտորները և կծածկի տեղեկատվության ստացում - որոնում - ընկալում - գնահատում- պահպանում- փոխանցում - ստեղծում շրջանակն ամբողջությամբ՝ ցույց տալով նաև այս տարբեր բաղադրիչների միջև կապերը:</p> |
| <p>Եթե գիտելիքների մակարդակում թիրախ խմբի մասնակիցները քիչ թե շատ տեղեկացված են մեդիագրագիտության կանոնների գոնե որոշ մասին, ապա հմտությունների և վարքագծի իրականացման տեսանկյունից այս արդյունքն ավելի մտահոգիչ է:</p> | <p>Որպեսզի մասնակիցները գիտելիքների ստացումից հետո դրանք կիրառեն հմտությունների մակարդակով և դա դարձնեն սովորություն (փոխեն վարքագիծ), առաջարկվում է մասնակիցներին բացի տեսական գիտելիքները տրամադրել նաև պրակտիկ գործիքակազմ, որը իրագործելի քայլեր կառաջարկի տեղեկատվության ստեղծման, ստուգման և շրջանառման համար:</p> |
| <p>Մասնակցիներն ունեն անվստահություն մեդիայի նկատմամբ. նրանք կամ խուսափում են դրանից, կամ շատ զգացմունքային են արձագանքում զարմանալի, թվացյալ կեղծ կամ իրենց համար տհաճ տեղեկատվություն հանդիպելիս: Այս ֆենոմենը որոշ չափով կապված է պատերազմի ժամանակ ահռելի մեդիահոսքերի առաջացրած հուզական լարվածության և նաև կոլեկտիվ տրավմայի հետ:</p> | <p>Հաշվի առնելով հուզական և անվստահության մթնոլորտը՝ առաջարկվում է դասընթացի ժամանակ ուշադրություն դարձնել նաև մեդիայի բացասական ազդեցությունների կանխարգելման թեմաներին, ինչպես նաև փորձել զարգացնել մասնակիցների հուզական բանականությունը (EQ) և նրանց սովորեցնել սթրեսի կառավարման հմտություններ՝ տեղեկատվության հետ աշխատելիս:</p> |
| <p>Չնայած շատ դեպքերում խմբերից ստացված տվյալները համաչափ էին, այնուամենայնիվ, որոշ նկատելի ուղղություններով խմբերին հատուկ է միայն իրենց բնորոշ առանձնահատկություններ: Օրինակ՝ պատերազմի մասնակցիներին ավելի բնորոշ է եմոցիոնալ արձագանքը, նրանք չեն հետևում լրատվությանը և ավելի քիչ փորձ ունեն տեղեկատվության հետ աշխատելու: ՏԻՄ</p> | <p>Հաշվի առնելով խմբերի առանձնահատկությունները՝ առաջարկվում է բացի դասընթացի հիմնական ծրագիրը անհատականացված շեշտադրումներ ունենալ յուրաքանչյուր խմբի համար, որպեսզի թիրախավորվեն նրանց առանձնահատուկ կարիքները:</p> |

| | |
|---|--|
| <p>ներկայացուցիչներն ավելի ակտիվ են հետևում լրատվությանը, բայց հակված չեն նոր մեթոդներ սովորելուն: Դիվիզանի խառը խումբը բաց է նոր դասընթաց անցնելուն և նոր հմտություններ ձեռքբերելուն, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ սա ամենաքիչ համասեռ խումբն է մասնակիցների թե՛ տարիքային, թե՛ գրադավածության և թե՛ նախնական գիտելիքների առումով: Ուսուցիչներն էլ ունեն մեդիագրագիտության ավելի սպեցիֆիկ կարիքներ, քանի որ այդ գիտելիքներն ու հմտությունները օգտագործելու են իրենց աշխատանքի շրջանակում, ինչպես նաև փոխանցելու են աշակերտներին՝ բացի անձամբ օգտագործելը (հատակապես դասողեկները): Ծնողների խումբն էլ, որը կազմված է մեծամասամբ չաշխատող կանանցից, ովքեր ակտիվորեն օգտագործում են սոցիալական մեդիա, կարիք ունեն սովորել սոցիալական մեդիայի ավելի հիգիենիկ օգտագործման կանոններ:</p> | |
| <p>Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ թիրախ խմբերի մեծահասակների մի մասի մոտ նկատվում են նաև թվային գրագիտության բացեր՝ ժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու, անձնական տվյալները պաշտպանելու, կարգավորումները կառավարելու: Սա կարևոր գործոն է, որն անմիջականորեն կապ ունի մեդիագրագիտության հետ:</p> | <p>Առաջարկվում է մեդիագրագիտության ուսուցումը գուլգորդել թվային գրագիտության բաղադրիչով՝ զարգացնելով առցանց աշխարհում նավիգացվելու և թվային հաղորդակցության գործիքները գրագետ օգտագործելու հմտությունները:</p> |
| <p>Քանի որ մասնակիցների մեծ մասը ծանոթ չէ մեդիագրագիտության հայեցակարգին, չի մասնակցել մեդիագրագիտության միջոցառումների, նրանք ոչ միշտ են ընկալում դասընթացի կարևորությունը և նրանց բնորոշ է ցածր մոտիվացիան:</p> | <p>Առաջակվում է մինչև դասընթացի բուն մոդուլներին անցնելը բարձրացնել գիտակցությունը թեմայի կարևորության վերաբերյալ՝ շեշտադրելով այն օգուտները, որոնք կստանան դասընթացին մասնակցելիս փյունել, եթե չսովորեն փյունել մեդիագրագիտության հիմնական սկզբունքները:</p> |

Հավելված 1. Ֆոկուս խմբային քննարկման հարցաշար

Տեղեկացված Համաձայնություն (Informed consent)

Բարև Ձեզ, ես Արփիկեն եմ՝ անկախ հետազոտող, ով համագործակցում է ԴԿԿ ինթերնեյշնլի հետ այս հետազոտության շրջանակներում: Հետազոտության նպատակն է պարզել մեծահասակների շրջանում մեդիագրագիտության կարիքները, գիտելիքները, հմտություններն ու վարքագծերը: Հետազոտության արդյունքները կօգնեն մշակել ավելի նպատակային ծրագրային միջամտություններ:

Ձեր մասնակցությունը ֆոկուս խմբային քննարկմանը ամբողջովին կամավոր է: Քննարկելու ենք մի շարք հարցեր, որոնց շուրջ հետաքրքիր է իմանալ Ձեր կարծիքը կամ փորձը: Հիշեցնեմ, որ չկան ճիշտ և սխալ պատասխաններ: Եթե չեք ուզում պատասխանել որևէ կոնկրետ հարցի, ապա կարող եք բաց թողնել հարցը: Քննարկումը կտևի մոտ 1 ժամ:

Հավաստիացնում ենք, որ քննարկման ժամանակ հավաքված ինֆորմացիան կօգտագործվի միայն ընդհանրացված ձևով, Ձեր անունը և որևէ անձնական տվյալ չի արտացոլվի վերլուծության և գեկույցի մեջ: Ֆոկուս խմբային քննարկումը կձայնագրվի՝ սղագրման և վերլուծության ընթացքը հեշտացնելու նպատակով: Ձայնագրությունը կոչնչացվի գեկույցի պատրաստ լինելուն պես:

Կա՞ն հարցեր:

Համաձայն ե՞ք մասնակցել:

Ընդհանուր տվյալներ

Ամսաթիվ:

Մարզ/Կենտրոն:

Թիրախ խումբ:

Մասնակիցների քանակ:

Կին:

Տղամարդ:

Քաղաքաբնակ:

Գյուղաբնակ:

Այլ նշումներ:

1. Ծանոթացում

1.1 Խնդրում եմ ներկայանալ և կարճ նկարագրել

- Տարիք/կրթություն
- Որտեղ եք ապրում
- Ձեր զբաղվածությունը

2. Տեղեկատվության ստացում/որոնում

2.1. Հիմնականում որտեղի՞ց եք ստանում տեղեկատվություն: Ի՞նչ աղբյուրներից: Որքանո՞վ է կարևոր աղբյուրը Ձեզ համար:

2.2. Ինչպիսի՞ դեր ունի սոցիալական մեդիան տեղեկատվության ստացման հարցում:

2.3. Ավելի շատ ի՞նչ ձևով եք ստանում տեղեկատվությունը: Ակտիվ, թե՞ պասիվ ճանապարհով:

Ակտիվ- եթե ինքներդ նախաձեռնում եք որոնումը, նպատակադրված բացում կոնկրետ հարթակներ՝ տեղեկատվություն որոնելու և ստանալու համար:

Պասիվ- եթե սպառում եք այն տեղեկատվությունը, ինչ ուղղակի հանդիպում է՝ առանց Ձեր հատուկ որոնման:

Վարժություն 1.

Պատկերացնել իրավիճակ, երբ որևէ տեղեկատվական հարթակում Դուք հանդիպում եք հակիրճ տեղեկատվություն, որը՝

ա) վերաբերում է Ձեզ համար շատ կարևոր/հոգեհարազատ թեմայի,

բ) պարունակում է խիստ դրական /բացասական, գուցե՝ անսպասելի/ցնցող տեղեկություն

գ) կարծում եք այլոց համար ևս կարևոր է:

Ի՞նչ կանեք

3. Տեղեկատվության ընկալում/գնահատում

3.1. Պատկերացրեք, որ հանդիպում եք մի կարևոր կամ զարմանալի լուրի, որը կարծում եք, կարող է կեղծ լինել: Նախևառաջ ի՞նչը կարող է հուշել, որ տեղեկատվությունը կեղծ է կամ հավաստի չէ:

3.2. Ինչպե՞ս եք վարվում կեղծ թվացող տեղեկատվության հանդիպելիս:

3.3. Երբ ցանկանում եք պարզել, թե արդյոք տեղեկությունն իրական է, ի՞նչ քայլեր կձեռնարկեք այս տեղեկությունը ստուգելու համար: Կարո՞ղ եք բերել օրինակներ, երբ փորձել եք պարզել տեղեկության հավաստիությունը: Ինչպե՞ս:

3.4. Որքանո՞վ եք վստահ կեղծ լուրերը/ապատեղեկատվությունը բացահայտելու Ձեր ունակության վրա: Ինչո՞ւ:

3.5. Փաստերի ստուգման ինչպիսի՞ գործիքներ գիտեք:

Վարժություն 2.

Այժմ Ձեզ ներկայացնում եմ մի քանի նյութ: Հնարավոր է, որ բոլորը լիովին հավաստի լինեն, կամ բոլորը՝ կեղծ, թերի, կամ այլ խնդրով, իսկ հնարավոր է, որ մի մասը լինի հավաստի, իսկ մյուս մասը՝ ոչ: Խնդրում եմ ձեզ տրամադրված թերթիկում յուրաքանչյուր նյութի համար նշել.

ա) տեղեկության աղբյուրը

բ) որքանով է տեղեկությունը հավաստի / արժանահավատ

գ) եթե կասկածելի է թվում, ապա կոնկրետ ինչը և ինչու՞

4. Տեղեկատվության պահպանում/փոխանցում/ստեղծում

4.1. Որքան հաճախ եք դուք ինքներդ լուրեր փոխանցում/շրջանառում, կիսվում այլոց գրառումներով կամ ձեր ստեղծած բովանդակությամբ:

4.2. Ո՞ր դեպքերում և ի՞նչ ճանապարհով եք տեղեկությունները փոխանցում/շրջանառում:

4.3. Ո՞րն է ձեզ համար տեղեկությունը տարածելու հիմնական շարժառիթը:

4.4. Արդյո՞ք երբևէ փոխանցել/կիսել եք կասկածելի կամ, ինչպես հետագայում պարզվել է, ոչ հավաստի տեղեկություն: Եթե այո՝ ինչպե՞ս եք պարզել: Ի՞նչ եք արել պարզելուց հետո:

4.5. Լինու՞մ եմ դեպքեր, երբ ուզում եք տեղեկությունը կամ աղբյուրը պահպանել հետագայում վերադառնալու կամ այլոց հետ կիսվելու համար: Եթե այո՝ ինչպե՞ս եք վարվում:

4.5. Հնարավո՞ր է, որ որևէ բովանդակություն/տեղեկություն պահելու կամ շրջանառելու արդյունքում առաջանա վտանգ տեղեկությունը շրջանառողի, սպառողի, կամ որևէ այլ անձի համար:

4.6. Ի՞նչ վտանգներ կարող են առաջանալ և ինչպե՞ս կարելի է դրանցից պաշտպանվել:

5. Մասնակցությունը ՄԳ նախաձեռնություններին

5.1. Երբևէ մասնակցե՞լ եք մեդիագրագիտության որևէ նախաձեռնության՝ դասընթաց, սեմինար և այլն: Խնդրում եմ մի փոքր պատմել:

- Ե՞րբ է տեղի ունեցել նախաձեռնությունը
- Ո՞ւմ կողմից էր կազմակերպված
- Որո՞նք էին հիմնական թեմաները

6. Մեդիագրագիտության ընկալվող կարիքներ

6.1. Ի՞նչ եք կարծում, /*նշել խմբի անունը*/ շրջանում մեդիայից օգտվելու գիտելիքների և հմտությունների բարելավման ի՞նչ կարիքներ կան:

6.2. Կա՞ հարց/թեմա, որի մասին անձամբ դուք կուզեիք իմանալ ավելին: Եթե այո, նշե՞ք՝ որը:

Հավելված 2. Վարժություն 1

Պատկերացնել իրավիճակ, երբ որևէ տեղեկատվական հարթակում Դուք հանդիպում եք հակիրճ տեղեկատվություն, որը՝

- վերաբերում է Ձեզ համար շատ կարևոր/հոգեհարազատ թեմայի,
- պարունակում է խիստ դրական / բացասական, գուցե՝ անսպասելի/ցնցող տեղեկություն,
- կարծում եք այլոց համար ևս կարևոր է:

Ի՞նչ կանեք

Հավելված 3. Վարժություն 2

| | Տեղեկության աղբյուր | Որքանով է հավաստի | Եթե կասկածելի բան կա, նշել: |
|---|---------------------|-------------------|-----------------------------|
| 1 | | | |
| 2 | | | |
| 3 | | | |
| 4 | | | |

Նմուշ 1.

lurer24.online/redaktor/28140/?fbclid=IwAR2KudR1kKwWsl5CLPQNbPv8WU1o2mME4xppi85215GNtyuwLnA_uSeVwjM

ՓՈՒՆԵՎԱՆԻ ԱՎՏՈՇԱՐԱՑՄԱՆ ՎԹԱՐԻՑ ՄԱ ՀԱՅՄԱՆ ՀՐԻ ԿՆՈՋ ԴԵՊՔԻ ՎԱՅՐՈՒՄ ՀԻՄԱ ԵՉՐԱՔԱՐԻՆ ՆՍՏԱԾ Է ՄԻ ԱՂՁԻԿ ԵՎ ԼԱՅՑ Է ԼԻՆՈՒՄ

Վահագն Խաչատուրյանը կարևոր գաղտնիքներ է բացել հայ-ադրբեջանական բանակցություններից. Բացառիկ Տեսանյութ

18.06.2022 redaktor



Поиск...

ПОИСК

СВЕЖИЕ ЗАПИСИ

Յուրի Շատ ուն ունի կյանքի վեքին ը ուկ են երը. բա ցառ իկ կա դրեր հայ տնի է ն աև մա հ վա ն պա տ ճառը

Ով է Փա թաք արում մեքե նայի պայ թյո Լ նից մ ա հա ց ած տ դամ ա ըըը

Մա հա ցել է հա նր ահա յտ ե ըգ իչ Յուրի Շատուկը

Շաքաթվա հոյոսկոպ. ի՞նչ է սպասվում կենդանակերպի նշաններին՝ հունիսի 27-ից հուլիսի 3-ը

Շաքաթվա հոյոսկոպ. ի՞նչ է սպասվում կենդանակերպի նշաններին՝ հունիսի 27-ից հուլիսի 3-ը

Նմուշ 2.



NCDC, Armenia / Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման Ազգային Կենտրոն

July 13 at 3:32 PM · 🌐



📌 COVID-19-ի դեմ բուստեր պատվաստումները խթանում են իմուն համակարգը՝ ամրապնդելով ժամանակի ընթացքում հնարավոր թուլացած պաշտպանությունը 🙌

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ COVID-19-Ի ԴԵՄ ԽԹԱՆԻՉ (ԲՈՒՍԵՐ) ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

COVID-19-ի դեմ բուստեր պատվաստումները խթանում են իմուն համակարգը՝ ամրապնդելով ժամանակի ընթացքում հնարավոր թուլացած պաշտպանությունը:

COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստումները, այդ թվում խթանիչ (բուստեր) դեղաչափերը, ապահովում են ոիսկի խմբի անձանց շրջանում առավելագույն պաշտպանություն՝ COVID-19-ի ծանր ձևերից:



cdc.gov/coronavirus

323388-CH



Dr.David and 13 others

8 Shares

Նմուշ 3.

 newvideo.am Hayvideo.com
October 2, 2017 · 🌐

Հենց նոր սկանդալային նորություն. ուղղակի կապշեք. Մանուկ Սիմոնյանի գործով՝ սկանդալային ձայնագրություններ կիրառարակվեն 😱😱
Պարզվում է...
ՀՂՈՒՄԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 📌



1 Comment

 Like  Comment  Share

Most relevant ▼

Նմուշ 4.

 **ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն Ministry of Environment of Armenia**  ...

July 11 at 1:38 PM · 

!! Անընդունելի է Հայաստանի «Կարմիր գրքում» գրանցված որևէ կենդանատեսակի հանդեպ ոտնձգությունը

Իրացնելով ոստիկանության Արարատի մարզային վարչությունում ստացված օպերատիվ տվյալները՝ ոստիկանության Արարատի բաժնի ծառայողները հուլիսի 10-ին՝ ժամը 20:50-ին, Փոքր Վեդի գյուղի «Խոր Վիրապ» պետական արգելավայրի հարակից համայնքային տարածքից բաժին են բերել 31-ամյա տղամարդու:

Բաժնում պարզվել է, որ նա ժամը 20:00-ի սահմաններում որսացել է Կարմիր գրքում գրանցված քաջահավ թռչուն:

! Խիստ դատապարտում ենք նման վերաբերմունքը և հորդորում գերծ մնալ Հայաստանի «Կարմիր գրքում» գրանցված որևէ կենդանատեսակի հանդեպ դաժան վերաբերմունք դրսևորելու մերժելի գործելանոճից:

Հայաստանի կարմիրգրքյան կենդանատեսակների պահպանության համար պատասխանատու ենք բոլորս:



  154 14 Comments 17 Shares

